

## ՄԱԿ-ի տեղեկատվական գրադարան

ՄԱԿ-ի Տեղեկատվական գրադարանը գտնվում է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի առաջին հարկում: Այն ստեղծվել է 1995թ. ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության կողմից: Այնուհետև ՄԱԿ-ի ներկայիս գործող բոլոր բաժինները՝ ՄԱԿ-ի Ձարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, Պարենի համաշխարհային ծրագիրը, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, նպաստեցին գրադարանի հետագա զարգացմանը:

Գրադարանի հիմնական ֆոնդը կազմում են ՄԱԿ-ի և նրա գործակալությունների նյութերն ու փաստաթղթերը: ՄԱԿ-ի Տեղեկատվական գրադարանի էլեկտրոնային տվյալների շտեմարանը պարունակում է ավելի քան 5000 անուն տարբեր գրքերի, հանդեսների ու մանր նյութերի, տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների ու թվային տեսաֆիլմերի գրառումներ հայերեն ու ՄԱԿ-ի գործող լեզուներով: Այն մշտապես լրացվում է ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակից ստացվող նյութերով ու տեղական հրատարակություններով: Գրադարանի ֆոնդում տեղ են գտել նաև բազմաթիվ գրքեր և զանազան նյութեր, որոնք ստացվել են միջազգային կազմակերպություններից, տեղական կառավարական ու ոչ-կառավարական հաստատություններից, ինչպես և անհատներից:

ՄԱԿ-ի Տեղեկատվական գրադարանը անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր է ոչ միայն ՄԱԿ-ի աշխատակազմի, այլև հանրության համար: Դպրոցականների, ուսանողների, ինչպես նաև ուսուցիչների ու տարբեր մասնագետների խմբեր հնարավորություն ունեն այցելել գրադարան և ծանոթանալ ՄԱԿ-ի թարմ տեղեկատվությանը, ստանալ անհրաժեշտ խորհուրդներ ընթացիկ գործունեության մասին:

Հիմնական բիբլիոգրաֆիան կարելի է գտնել առցանց վիրտուալ գրադարանում՝ [www.intra.un.am](http://www.intra.un.am):

### Աշխատանքային ժամերը

Անձնակազմի համար՝ Երկուշաբթի - ուրբաթ,	9:00 - 18:00
Հանրության համար՝ Երեքշաբթի և հինգշաբթի,	14:00 - 17:30

### Մեր հասցեն՝



Պետրոս Ադամյան 14,  
ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան 0010  
Հեռ.՝ (010) 560212, (010) 580032  
Էլ. հասցե՝ uno.yerevan@unic.org  
<http://www.un.am>

UN AN-1000-November 2008 UNO/DPI Yerevan/091



## Միավորված ազգերի կազմակերպության Հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակ

Միավորված ազգերի կազմակերպության Հանրային տեղեկատվության վարչությունը (ՀՏՎ) ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հիմնադիր մարմիններից է, որն ստեղծվել է 1992թ. Հայաստանի ՄԱԿ-ին անդամակցելուց անմիջապես հետո: Որպես ՄԱԿ-ի Քարտուղարության բաղկացուցիչ մաս՝ ՀՏՎ-ն երկրում ՄԱԿ-ի համակարգի վերաբերյալ տեղեկատվություն տարածող հիմնական աղբյուրն է: Այն ՄԱԿ-ի քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մարդասիրական բնագավառների գործունեության ու նպատակների մասին տեղեկատվական թարմ նյութեր է տրամադրում տեղական բազմատարր լսարանին:

## ՄԱԿ ԴՏՎ-ն ամբողջ աշխարհում

ՄԱԿ-ի Զանրային տեղեկատվության վարչությունը ստեղծվել է 1946թ. Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանում ընդունված (13(1) 1946թ. փետրվար) բանաձևի հիման վրա, որպեսզի աշխարհի բոլոր մասերում բնակվող մարդիկ ամբողջական տեղեկություն ստանան ՄԱԿ-ի և նրա գործունեության մասին:

Զանրային տեղեկատվության վարչությունը ՄԱԿ-ի գլխավոր մարմիններից Քարտուղարության մասնագիտացված վարչություններից մեկն է: ՄԱԿ ԴՏՎ-ի գլոբալ ցանցը կապող օղակ է աշխարհի ողջ բնակչության և Կենտրոնական գրասենյակի միջև: Տեղակայված լինելով 63 երկրներում, այս գրասենյակները օգնում են տեղական հասարակայնությանը ձեռք բերել թարմ տեղեկատվություն կազմակերպության և նրա գործունեության մասին:

### ԴՏՎ-ի մանդատը

#### Տեղեկատվության փոխանցում և փոխադր նյութերի պատրաստում մայրենի լեզուներով

ՄԱԿ ԴՏՎ-ի գլխավոր մանդատն է ՄԱԿ-ի մասին հիմնական գիտելիքների տարածումից մինչև հատուկ իրադարձություններ նշելու միջոցառումների կազմակերպումը, ամենաթարմ տեղեկությունների տրամադրումը լրագրողներին, հետազոտողներին, մանկավարժներին և ոչ-կառավարական կազմակերպություններին (ՈԿԿ): ԴՏՎ երևանյան գրասենյակի հիմնական նպատակներից է նաև սեփական հրատարակությունների և տեղեկագրերի հրատարակումը հայերենով, որոնք մեկնաբանում են ՄԱԿ-ի վերջին նորություններն ու համաշխարհային թեմատիկ առաջնահերթությունները:

ԴՏՎ-ն պատրաստել է նաև ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի լրատուն, տարվա օրացույցները, պաստառներ և այլ տեղեկատու նյութեր: ԴՏՎ-ն նաև կազմակերպում է տարբեր նյութերի թեմատիկ ցուցահանդեսներ, ինչպես նաև մամլո ասուլիսներ և ճեպագրույցներ:

### Համագործակցություն

#### • ԶԼՄ-ների հետ

Պատրաստում է մամլո հաղորդագրություններ, կազմակերպում է ասուլիսներ, թրթրերին տրամադրում է հոդվածներ, ռադիո և հեռուստատեսային ծրագրերին՝ հարցազրույցներ, կազմակերպում է ՄԱԿ-ի թեմաների վերաբերյալ ելույթներ ու դասախոսություններ: Ըստ հնարավորության օժանդակում է լրագրողների գլոբալ միջոցառումներին ու համաժողովներին մասնակցությամբ: Զանրային տեղեկատվության վարչությունը ՄԱԿ-ի վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական աղբյուր է լրատվամիջոցների համար:

#### • Քաղաքացիական հասարակության հետ

ԴՏՎ-ն աշխատում է ՄԱԿ-ին մտահոգող հարցերում ներգրավված քաղաքացիական հասարակության անդամների ու ՈԿԿ-ների հետ, աջակցում նրանց կազմակերպելու սեմինարներ, ցուցահանդեսներ և ՄԱԿ-ի հիշարժան օրերին նվիրված միջոցառումներ: 1947թ. ի վեր ԴՏՎ-ն համագործակցում է ՈԿԿ-ների հետ: Հայաստանում գործում են ԴՏՎ-ին ընկերակցված 4 ՈԿԿ-ներ, որոնցից երկուսն ունեն Տնտեսցիտրիի խորհրդատվական կարգավիճակ և: ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի ստեղծման և գործունեության բնագավառում իր մեծ լուսնան ունի ՄԱԿ-ի ԴՏՎ-ն:

#### • Երիտասարդական ու կրթական հաստատությունների հետ

ԴՏՎ-ի կարևորագույն խնդիրներից են երիտասարդության հետ մշտական շփումը և ՄԱԿ-ի ու Մարդու իրավունքների վերաբերյալ նրանց կրթելը: Ուսուցիչների, ուսանողների ու աշակերտների համար ԴՏՎ-ն մշտապես կազմակերպում է զանազան կրթական միջոցառումներ, բազմապիսի տեղեկատվությամբ օժանդակում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհրդի և այլ կոմիտեների մոդել-կոնֆերանսներ կազմակերպողներին: ԴՏՎ-ում իրենց ուսումնական պրակտիկան են անցկացնում կամ աշխատում որպես կամավորներ ավարտական կուրսի ուսանողներ:

#### • Կառավարության ու միջազգային այլ կազմակերպությունների հետ

Թեկուզև ԴՏՎ-ի հիմնական մանդատը հանրության հետ համագործակցությունն է, այնուամենայնիվ ԴՏՎ-ն համագործակցում է նաև պետական տարբեր մարմինների հետ՝ հատկապես համապատասխան տեղեկատվություն հայթայթելու ու համատեղ միջոցառումներ կազմակերպելու գործում: Նույնը կարելի է ասել նաև միջազգային ու տարածաշրջանային այլ կազմակերպությունների հետ համագործակցության մասին:

#### • ՄԱԿ-ի գործակալությունների հետ

ԴՏՎ-ն, որպես տվյալ երկրում ՄԱԿ-ի գրասենյակի անդամ, ակտիվորեն համագործակցում է երկրում գործող ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների հետ: Համարվում է ՄԱԿ-ի տեղեկատվության մասնագիտացված միավորը:

### Վեբկայք

ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակն ունի 6 աշխատանքային լեզուներով աշխատող վեբկայք ([www.un.org](http://www.un.org)), իսկ ԴՏՎ երևանյան գրասենյակը պատասխանատու է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պաշտոնական երկլեզու վեբկայքի պատրաստման և բովանդակության համար ([www.un.am](http://www.un.am)): Այցելուները այս կայքում կարող են գտնել ոչ միայն թարմ տեղեկատվություն Հայաստանում տեղի ունեցող ՄԱԿ-ի միջոցառումների ու գործունեության մասին, այլև փաստեր ՄԱԿ-ի մասին, միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթեր և այլն: